Նարեկ Սարգսյան

Պացիենտը

Գործող անձիք

Արտակ-69 տարեկան, կասկածամիտ, համառ, դժգոհող: Չի սիրում գումար ծախսել:

Հաամիկ-ընտանեկան բժիշկ, 35 տարեկան, ինքնահավան, մեծամիտ, տառապում է սեփական անձի կարևորության մոլուցքով, ունի թերի գիտելիքներ բժշկագիտությունից:

Ալբերտ-վնասվածքաբան, 48 տարեկան, փորձառու բժիշկ է:

Նարեկ-նյարդաբան, 39 տարեկան, խելացի, փայլուն տիրապետում է իր մասնագիտությանը:

ԱՐԱՐ 1-ԻՆ

Տեսարան

Հաամիկը նստած է իր աշխատասենյակում ու համակարգչով խաղ է խաղում: Դուռը ծեծում են, ու ներսը է մտնում Արտակը՝ իր հիվանդությունների պատմության քարտը ձեռքին:

Արտակ-Բարև Ձեզ, բժշկուհի, կարելի՞ է:

Հասմիկ (չպատասխանելով բարևին, արհամարհական ու դժգոհ տոնով հարցնում է)-Հարգելիս, Դուք հերթագրվա՞ծ եք:

Արտակ-Չէ, բժշկուհի, խի՞ պիտի հերթագրվե՞ի (հարցնում է զարմացած):

Հասմիկ (Սկսում է բարձր գոռալ)-Դու՞ք չգիտեք, որ ինձ մոտ մտնելուց առաջ պետք է հերթագրվել: Դուք երևի հիմա ուրիշի տեղն եք մտել, ուրիշի հերթը գողացել:

Արտակ-Բայց բժշկուհի ախր դրսում Ձեզ ոչ ոք չէր սպասում, ոչ մի հերթ էլ չկար: Ես էլ մտա:

Հասմիկ-Այդ ինչպես կարող է ինձ ոչ ոք չսպասել: Ես այս պոլիկլինիկայի ամենապահանջված ընտանեկան բժիշկն եմ:

Արտակ (Զարմանքից բերանը բացում է)-Հա՞ որ:

Հասմիկ (Հունից դուրս գալով՝ սկսում է ավելի բարձր գոռալ)-Լսեք, ես ժամանակ չունեմ, ի՞նչ եք ուզում, ինչի՞ համար եք եկել ինձ մոտ:

Արտակ-Բժշկուհի, փողոցում լավ չեմ քայլում, ոտքերս թուլանում են ու չեն ենթարկվում, ասես հարբած լինեմ:

Հասմիկ-Իսկ միգուցե հենց հարբած եք, պարզապես տեղյակ չեք: Արտակ-Վայ, չէ բժշկուհի, ես վաղուց ա, չեմ խմում:

Հասմիկ-Լավ, գլուխս մի տար, քարտդ տուր, տեսնամ ինչ եմ անում:
Արտակ-Ահա, խնդրեմ:

Հասմիկ-(Վերցնում է քարտը ու համակարգչով սկսում է ինչ-որ բան լրացնել)-Ես Արմեդով վնասվածաքաբանի խորհրդատվության ուղեգիր եմ դուրս գրում: Կգնաք Ձեր ուզած վնասվածքաբանի մոտ ու Ձեր գանգատները կասեք:

Արտակ-Բայց բժշկուհի, դա ի՞նչից է, ի՞նչ դեղ խմեմ:

Հասմիկ-Լսեք, Դուք դժվա՞ր եք հասկանում: Ասում եմ, իմ գրած ուղեգրով կգնաք վնասվածքաբանի մոտ ու կներկայացնեք Ձեր գանգատները:

Արտակ-Ինչաբանի՞ մոտ(հարցնում է զարմացած): Հասմիկ-Վնասվածքաբանի:

Արտակ-Դա ով ա՞:

Հասմիկ-Ձմեռ պապն ա, ով ա (ծաղրում է): Վերցրեք Ձեր քարտը, ազատ եք:
Արտակ-Հիմա ես ու՞մ մոտ գնամ:

Հասմիկ-Ում մոտ ուզում ես, նրա մոտ էլ գնա: Ես իմ գործն արել եմ, նեղ մասնագետի խորհրդատվության ուղեգիրը դուրս եմ գրել Արմեդով:

Արտակ-Բժշկուհի, ես Արմեդ-Մարմեդ չեմ հասկանում, կարգին բան ասեք հասկանամ: Ինչի՞ց ա, որ փողոցում էդպես եմ քայլում:

Հասմիկ (Խորը հոգոց է արձակում)-Եթե փողոցում Դուք էդպես եք քայլում, նշանակում ա ստացել եք ոտքի կամ ողնաշարի կոտրվածք: Դրա համար էլ ուղարկում եմ վնասվածքաբանի մոտ: Կոտրվածքներով վնասվածաբանն է զբաղվում:

Արտակ-Բայց բժշկուհի, ես վեր չեմ ընկել, ի՞նչ կոտրվածք:

Հասմիկ-Վեր ես ընկել, պարզապես չես հիշում, էդ պահին կա՛մ քնած ես եղել, կա՛մ էլ՝ խմած:

Արտակ (Ցուցամատը վեր բարձրացնելով՝ դժգոհության ժեստ է անում ու իր հիվանդության պատմության քարտը վերցնելով՝ դուրս է գալիս՝ ասելով)-Այ քեզ բան:

Վարագույրն իջնում է:

ԱՐԱՐ 2-ՐԴ

Տեսարան

Ալբերտը համակարգչով աշխատում էր: Աշխատասեղանին թղթեր էին ու ռենտգեն ժապավեններ: Դուռը ծեծում են, ու ներս է մտնում Արտակը՝ անձնագիրը ձեռքին:

Արտակ-Բարև Ձեզ, բժիշկ, կարելի՞: Ալբերտ-Այո, համեցեք, նստեք:

Արտակ (Աթոռին հարմար տեղավորվելուց հետո ասաց)-Բժիշկ, իմ ընտանեկան բժիշկը ուղեգիր է կախել, որ գնամ վնասվածքաբանի մոտ: Ես եկա էս հիվանդանոցը, մտա ընդունարան, աղջիկները ուզեցին անձնագրիրս, տվեցի, հետո ինձանից 12 հազար դրամ փող ուզեցին, չնայած ես փաթեթով եմ էստեղ եկել, 69 տարեկան եմ: 65 տարեկանից բարձրներին անվճար ա: Ինչի՞ ինձանից 12 հազար դրամ փող վերցրին, կարո՞ղ եք ասել:

Ալբերտ-Ձեր վճարած 12 հազար դրամը համավճար է, ու դա օրենքով և հիվանդանոցի ներքին իրավական ակտով է սահմանված: Էնպես որ ապօրինի ոչինչ էստեղ չկա: Հիմա տվեք Ձեր անձնագիրը, տեսնեմ:

Արտակ (Անձնագիրը տալիս է բժշկին)-Վերցրեք:

Ալբերտ-Հարգելի, պացիենտ: Հիմա ասեք, թե ինչից եք գանգատվում:

Արտակ-Բժիշկ ջան, փողոցում լավ չեմ քայլում: Ոտքերս սկսում են թուլանալ, ոնց որ թե հեսա վեր եմ ընկնելու: Հարբածի նման օրորվելով եմ քայլում:Բայց տանը լավ եմ քայլում: Նման բաներ չկան:

Ալբերտ-Ոտքերում ցավ կամ այտուց կա՞: Արտակ-Այտուցն ինչ ա՞ բժիշկ:

Ալբերտ-Ոտքերդ ուռու՞մ են, ուռածություն կա՞: Արտակ-Չէ, բժիշկ ջան, ո՛չ ուռել են, ո՛չ էլ ցավացել:

Ալբերտ-Տանը ոտքերով ազատ քայլու՞մ եք, շարժունակության խնդիր ունե՞ք: Արտակ-Տանը հավեսով քայլում եմ, ամեն ինչ լավ ա, ոչ մի խնդիր չկա:

Ալբերտ-Դու որ էս հարցով գնացել ես քո ընտանեկան բժշկի մոտ, էս գանգատնե՞րն ես ասել, թե՞ ուրիշ բան ես ասել:

Արտակ-Իմ ընտանեկան բժշկին ասել եմ էն, ինչ հենց նոր Ձեզ ասացի: Ասել եմ, որ փողոցում լավ չեմ քայլում, ոտներս թուլանում են, հարբածի նման եմ քայլում: Բժշկուհին էլ ասաց, որ կա՛մ, մեջքս ա կոտրած, կա՛մ ոտս:

Ալբերտ (Զարմացած լսում է ու հարցնում)-Հենց էդպես էլ ասա՞ց: Արտակ-Հա, բժիշկ ջան, հենց էսպես էլ ասաց: Խի, ի՞նչ կա որ:

Ալբերտ-Բանն էն ա, որ էդ գանգատները, ինչ Դուք նկարագրում եք, դա նյարդաբանական խնդիր է: Վնասվածի հետ կապված էստեղ հարց չկա: Ընտանեկան բժիշկը Ձեզ պետք է ուղեգրեր ոչ թե վնասվածքաբանի, այլ նյարդաբանի մոտ: Սա նյարդային համակարգի հետ է կապված:

Արտակ (Զարմացած բացականչում է)-Էդ ո՞նց թե:

Ալբերտ-Հենց էդպես: Լավ, ուրեմն ես նյարդաբանի ուղեգիր կգրեմ համակարգում, Դուք անձնագրով կմոտենք մեր հիվանդանոցի նյարդաբանին, ինքը շատ լավ մասնագետ է:

Արտակ-Էլ գումար չե՞մ մուծելու չէ՞:

Ալբերտ-Նյարդաբանի այցի համար նորից պետք է վճարեք 12 հազար դրամ որպես համավճար:

Արտակ(Զայրացած բացականչում է)-Բայց ես էդ 12 հազար դրամը արդեն մուծել եմ, նորից խի՞ պիտի մուծեմ:

Ալբերտ-Հարգելիս, Դուք այդ 12 հազար դրամը վճարել եք վնասվածքաբանի մոտ այցի համար: Արտակ-Բայց Դուք ոչ մի բան չարիք, Ձեզնից ցրում եք: Հե՛տ տվեք իմ մուծած փողը:

Ալբերտ (Սկսում է բարձր գոռալ)-Լսիր, դու ի՞նձ ես տվել էդ գումարը, որ ինձնից ես ուզում: Ես ի՞նչ մեղավոր եմ, որ քո ընտանեկանը նյարդաբանի մոտ ուղարկելու փոխարեն ուղարկել ա վնասվածքաբանի մոտ: Ասա՛, իմ մեղքը էդտեղ ո՞րն ա:

Արտակ-Բա իմ մեղքը ո՞րն ա, որ էդ անգրագետը ինձ քեզ մոտ ա ուղարկել, իմ մեղքը ո՞րն ա: Ալբերտ-Լսեք, էդ բոլոր հարցերը կպարզեք Ձեր ընտանեկան բժշկի հետ:

Արտակ-Բա հիմա իմ փողը ես ումի՞ց հետ ստանամ:

Ալբերտ-Ես չգիտեմ: Գնացեք ու էդ գումարի հարցը Ձեր ընտանեկան բժշկի հետ քննարկեք: Էստեղ ես մեղք չունեմ: Ես ասում եմ, որ Ձեր խնդիրը նյարդերի հետ է կապված: Նյարդաբանը Ձեզ պիտի նայի: Դրա համար էլ ես Ձեզ ուղեգրել եմ նյարդաբանի մոտ: Գնացեք նյարդաբանի մոտ:

Արտակ-Եթե նյարդաբանի մոտ գնամ, էլի 12 հազար պիտի տամ: Բա որ հետո պարզվի, որ նյարդաբանի մոտ պիտի չգնայի, ուրիշ բժշկի մոտ պիտի գնայի: Էդ 12 հազարը ինձ ո՞վ ա հետ տալու:

Ալբերտ-Լսեք, հարգելիս: Չեմ հասկանում: Ձեր ուզածը գումար խնայելն է, թե՞ առողջական խնդիր լուծելը: Փոխանակ կենտրոնանաք Ձեր խնդրի վրա, եկել էստեղ փողի բազար եք անում: Անհարմար է:

Արտակ (Ձայրանում է ու սկսում գոռալ)-Չհասկացա, ինձնից ոտի վրա 12 հազար դրամ քցեցին Ձեր հիվանդանոցում: Հլա մի հատ էլ ես պիտի ամաչեմ: Դուք՝ բժիշկներդ, խիղճ չունեք: Մենակ մտածում եք, թե ոնց մարդկանցից փող կորզեք: Փողը վերցնում եք, բայց ոչինչ էլ չեք անում: Դե ախր ինչ պիտի անեք, որ: Պիտի բան հասկանաք, որ մարդկանց խնդիրները լուծեք:

Ալբերտ (Բռնում է Արտակի ձեռքից ու հրելով դուրս հանում իր աշխատասենյակից)-Դու՛րս եկեք էստեղից:

Վարագույրն իջնում է:

ԱՐԱՐ 3-ՐԴ

Տեսարան

Նարեկը, նստած իր աշխատասենյակում, համակարգչով փաստաթուղթ էր կազմում: Դուռը ծեծում են, ու ներս է մտնում Արտակը:

Արտակ-Բարև Ձեզ, կարելի՞ է: Նարեկ-Այո, ներս համեցեք, նստեք:

Արտակ (Նստում է աթոռին ու անձնագիրը տալիս Նարեկին)-Բժիշկ ջան, հիմա պատմեմ, թե իմ ընտանեկանը գլխիս ինչ փորձանք ա բերել:

Նարեկ-Ի՞նչ է պատահել:

Արտակ-Ուրեմն ես գնում եմ իմ ընտանեկան բժշկի մոտ, սա ուղեգիր ա կախում, որ պիտի գնամ վնասվածքաբանի մոտ: Մուծում եմ 12 հազար դրամ, մտնում վնասվածքաբանի մոտ, սա էլ ասում ա, թե ընտանեկանս իրա մոտ չպիտի ուղարկեր, այլ պիտի ուղարկեր նյարդաբանի մոտ: Պատկերացնու՞մ եք բժիշկ, էդ անգրագետի պատճառով ես 12 հազար դրամ կորցրեցի:

Նարեկ-Դե ոչինչ, ավելի վատ բաներ էլ են լինում:

Արտակ-Ո՞նց թե ոչինչ: Էդ 12 հազար դրամը փողոցում գցած չի է, որ գնամ վերցնեմ: Հիմա էս թվում մեկը մեկին սկի հենց էնպես հազար դրամ փող չի տալիս:

Նարեկ (Արտակի անձնագրային տվյալների հիման վրա մտնում է նրա Արմեդ էջը, տեսնում վնասվածքաբանի գրած ուղեգիրը և նախնական ախտորոշումը)-Վնասվածքաբանը գրել է, որ Ձեզ մոտ քայլքի խանգարում է: Հիմա խնդրում եմ մանրամասն ներկայացրեք Ձեր գանգատները:

Արտակ-Տանը շատ լավ եմ քայլում, ոտքերումս թուլություն չկա: Ոտքերիս ուժը տեղում ա, բայց երբ դուրս եմ գալիս փողոց, էնտեղ ոտքերս միանգամից սկսում են թուլանալ, ոնց որ թե հեսա պիտի ընկնեմ, մարմովս դող ա անցնում, հարբածի նման եմ քայլում:

Նարեկ-Քանի՞ տարեկան եք:

Արտակ-Բժիշկ ջան, անձնագիրս Ձեզ մոտ ա, բացելիս չե՞ք տեսել: Նարեկ (Շփոթված շարժումներ է անում)-Ա՛, այո: Ծնվել եք 57 թվին:

Արտակ-57 թվին չէ, այլ 1957:

Նարեկ-Հասկանում եմ, 57 ասելով նկատի ունեի 1957 թիվը: Արտակ-Դե հիմա 2026-ից հանեք 1957, տեսեք ի՞նչ եք ստանում:

Նարեկ (Սկսում է նյարդայնանալ Արտակի պահվածքից)-Դժվա՞ր է ասել, որ Դուք 69 տարեկան եք:

Արտակ-Բժիշկ ջան կատակ արեցի, մի նեղվեք:

Նարեկ-Ձեմ նեղվում, բայց էլ նման անհեթեթ կատակներ չանեք: Ձեզ հաշիվ տվեք, թե որտեղ եք գտնվում ու ում հետ եք խոսում:

Արտակ-Լավ, լավ . . .

Նարեկ-Ասում եք, որ ոտքերի մկանների ուժը տեղն է: Այդպե՞ս է: Արտակ-Հա բժիշկ, եթե պետք է, ցույց տամ:

Նարեկ-Հապա . . .

Արտակ (Աթոռից վեր է կենում ու ոտքով ուժեղ հարվածում Նարեկի սեղանին): Նարեկ (Սկսում է գոռալ)-Այդ ի՞նչ եք անում, գժվե՞լ եք:

Արտակ-Բժիշկ, ես ասացի ուզու՞մ եք, որ իմ ոտքի ուժը ցույց տամ, Դուք էլ ասացիք՝ հա: Ես էլ ցույց տվեցի:

Նարեկ-Բավական է, վերջացրեք հիմարություններ դուրս տալ: Ուրեմն ես Արմեդով ուղեգիր եմ դուրս գրում, պետք է գնաք գլխուղեղի ՄՌՏ հետազոտության, հետո պետք է գնաք ԼՕՌԻ : ԼՕՌԻ ուղեգիրն էլ եմ Արմեդով դուրս գրում:

Արտակ (Զարմացած բացականչում է)-Լոռի՞: Բժիշկ, խի հասկացող բժիկները միայն Լոռիում են գտնվում, Հայաստանի էլ ուրիշ քաղաքում հասկացող բժիշկ

չկա:

Նարեկ-Հարգելիս, ես չասեցի, որ գնաք Լոռվա մարզ, այլ ասացի, որ գնաք ԼՕՌԻ: ԼՕՌԸ ականջի բժիշկն է:

Արտակ-Հասկացա: Դե էդպես ասա, այ մարդ: Բայց հլա մի րոպե, ես ինչի՞ պիտի գնամ ականջի բժշկի մոտ: Իմ ականջին ի՞նչ ա եղել: Ես ասում եմ ոտքերս ա, Դուք ուղարկում եք ականջի բժշկի մոտ: Ականջն իմ ոտքերիս հետ ի՞նչ կապ ունի:

Նարեկ (Զայրույթը մի կերպ զսպելով՝ սկսում է համբերատար բացատրել)-Լսեք, Դուք ասում եք, որ փողոցում քայլելիս ոտքերում թուլություն եք զգում, դող, ասես պիտի ընկնենք, հարբածի նման եք քայլում: Այդպես է, չէ՞:

Արտակ-Հա, էդպես ա:

Նարեկ-Դե որ էդպես ա, էդ նշանակում է, որ փողոցում քայլելիս Դուք ունեք մարմնի հավասակշռությունը պահելու խնդիր: Փողոցում մարդու մարմնի հավասարակշռությունը պահում են մկաններն ու հոդերը, վեստիբուլյար համակարգը և գլխուղեղը: Քանի որ Դուք մկանային ու հոդային խնդիրներ չունեք, ուրեմն պատճառը կա՛մ վեստիբուլյար համակարգն է, կա՛մ էլ գլխուղեղը: Դրա համար էլ ուղարկում եմ գլխուղեղի ՄՌՏ հետազատության, իսկ ականջի բժշկի մոտ էլ ուղարկում եմ էն պատճառով, քանի որ վեստիբուլյար համակարգը գտնվում է ականջի ներսում: ԼՕՌ բժիշկը սարքով պետք է նայի ականջի ներսը, տեսնի՝ ինչ վիճակ է, վեստիբուլյար համակարգի խնդիր կա՞, թե՝ ոչ:

Արտակ-Եթե անկեղծ, ես Ձեր ասածներից ոչինչ էլ չհասկացա: Ես պարզ հայերեն լեզվով ասում եմ, որ ոտքերս ա, Դուք ասում եք, որ գլխից ա կամ ականջից: Էդպեսի բան ո՞նց կլինի:

Նարեկ-Խնդիրը Ձեր ոտքերի մեջ չէ:

Արտակ-Բա ինչի՞ մեջ ա: Ձեր ասածը նույն ա, որ մարդու ձեռքը ցավի, ասեն ձեռքից չի, ոտքից ա, կամ աչքերից: Տենց բան ո՞նց կլինի:

Նարեկ-Ի դեպ, մոռացա հարցնել: Դուք իմ այցելության համար վճարե՞լ եք 12 հազար դրամ համավճարը:

Արտակ-Ա՛, Ձեր փորացավն էլ հենց դայա: Ձերն էն ա, որ մարդկանցից փող պլոկեք ու պաս տաք ուրիշի մոտ: Ականջի բժշկի մոտ էլ ուղարկում եք, որ 12 հազար էլ էնդեղ մուծեմ, չէ՞: Էլ ոչ մի կոպեկ էլ չեմ մուծելու, մեկ ա ոչ մի նորմալ բան չեք ասում, մենակ պաս եք տալիս սրա-նրա մոտ: Ձեր 12 հազարն էլ չեմ մուծելու: Առա հա Ձեզ(բութ մատով համապատասխան ժեստ է ցույց տալիս):

Նարեկ (Սկսում է գոռալ)-Լսեք, Ձեզ ինչե՞ր եք թույլ տալիս, հենց հիմա դուրս եկեք, թե չէ ոստիկանություն կկանչեմ:

Արտակ-Անամոթ խաբեբաներ, անգրագետներ: Հասկացանք, որ բան չեք հասկանում, բա էդ 12 հազարները ինչի՞ եք վերցնում: Չլինի՞ փայլուն բժշկագիտական գիտելիքների համար(այս ասելով՝ դուրս է գալիս՝ դուռը շրխկացնելով):

Վարագույր իջնում է:

ԱՐԱՐ 4-ՐԴ

Տեսարան

Արտակը հիվանդանոցի միջանցքում է: Այնտեղ հիվանդները, նստած աթոռներին, սպասում են իրենց հերթին, որ մտնեն բժշկի մոտ: Արտակը բարձր սկսում է ինքն իր հետ խոսալ:

Արտակ-Ժողովուրդը ճիշտ ա ասում, որ մարդ բժշկի չպիտի գնա: Հենա ես գնացի: Ի՞նչ արդյունքի հասա որ: Մեկը մեկից անգրագետ: Մենակ փող են ուզում, բայց իրենց մասնագիտությունից ոչինչ չեն հասկանում: Չէ՛, էս պետություն չի: Սաղ օրը ծիլիվիզրով ասում են, թե 65 տարեկանից բարձր մարդկանց համար հիվանդանոցներում ամեն ինչ անվճար ա, իբր սոցփաթեթ ա, բան ա: Բայց ի՛նչ անվճար: Հիվանդանոց չմտած՝ ասում են՝ 12 հազար դրամ

մուծի: Բայց ինչի՞ համար մուծեմ, եթե ուղեգրով եմ եկել, ու ամեն ինչ անվճար ա: Առաջ վճարովի էր, բայց բժշկին տալիս էինք 10 հազար դրամ, մեկ-մեկ էլ 5 հազարով էինք բարիշում, բայց էս սոցփաթեթից հետո 10-ի տեղը 12 հազար ենք տալիս: Էդ դառավ անվճա՞ր: Է՛, չգիտեմ, ինչ ենք անելու: Խուժան պետություն, անգրագետ ու թալանչի բժիշկներ: Լավ, զանգեմ թոռանս, ասեմ թող ինտերնետով նայի, թե սրա համար ի՞նչ դեղ պիտի խմեմ:Էլ ուրիշ ճար չկա: Որ սպանեն էլ, ես բժշկի գացողը չեմ:

Վարագույրն իջնում է: